Սույն դեպքում հայցադիմումը ստորագրվել և ներկայացվել է «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից, սույն գործով որպես «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչներ ներգրավված են Տիգրան Վարտանովը և Յուրի Մելիք-Օհանջայնյանը, իսկ Աննա Երվանդի Ավետսիյանի կողմից մատուցած ծառայությունների վերաբերյալ սույն քաղաքացիական գործով առկա չեն հիմնավորված տվյալներ:

Ելնելով այն հանգամանքից, որ դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը, իսկ այդպիսիք՝ Աննա Երվանդի Ավետսիյանի մասով գործում առկա չեն, ինչպես նաև այն, որ միայն անձի հետ կնքած պայմանագրի առկայությունը բավարար չէ ծառայությունները հենց տվյալ անձի կողմից մատուցած լինելու փաստը հաստատելու համար՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է մերժման:

Վերոնշյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 241-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Արմեն Աբգարի Մուրադյանի 04.04.2024թ. որոշումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

1.1 Անվավեր ճանաչել «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Արմեն Աբգարի Մուրադյանի 04.04.2024թ. որոշումը:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամից հօգուտ «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 50.000,00 ՀՀ դրամ՝

որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

2.1 «ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պահանջն ընդդեմ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամից՝ փաստաբանի վարձատրության՝ 250.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման մասին, մերժել:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ **ԱԼԼԱ ՔՅՈՒՐՔՉՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am